

616.9
Q-44

Բ. Ա. ԱՎԱՄԱՐՏՅԱՆ

320/132

ՀԱՍԱԴՈՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԻՑԻԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ

ԱՍԻՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՐԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ
ՍԱՆԼՈՒՄ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

30 JUL 2010
J

H APR.
1-5672

616.9

Q-44

Բ. Ա. ԱՂԱՍԻՐՅԱՆ

ՀԱՄԱՐՈՒԹԵԿՈՒՆՆԵՐ
ԱԻՖԻԼԻՍ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

ՀԻԲ. № 14269

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԴՈՂԿՈՄԱՆ
ՍԱՆԼՈՒՄ ԲԱԺԻՆ



ՅԵՐԵՎԱՆ

1940

6 FEB 2013

6593

ՀԱՄԱՌՈԱՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԻՑԻԼԻՍ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վեներական հիվանդությունները, այդ թը-
գում նաև սիֆիլիսը շատ հին հիվանդու-
թյուններ են, վորոնք գոյություն են ունեցել
մեր թվագրությունից շատ դարեր առաջ:
Սիֆիլիսը, վորպես վարակիչ հիվանդություն
հայտնի յե դարձել 15-րդ դարից:

Մի շարք պատմաբանների տվյալների
համաձայն, Կարլ 8-րդի գորքերը 1494—95
թ. թ. պատերազմների ու դեպի Իտալիա
կատարած արշավանքների ժամանակ շըփ-
ման մեջ են յեղել Բարսելոնից վերադարձած
իսպանական գորքերի հետ, վորոնք իրենց
հետ բերել են սիֆիլիս հիվանդությունը և
մեծ արագությամբ տարածել իսպանիայի
ծովափնյա քաղաքներում: Կարլ 8-րդի գոր-
քերի սիֆիլիսով վարակվելուն ոժանդակել
ե և այն կանգառումը, վորը տեղի յե ունե-
ցել Հոռմում, վորտեղ այն ժամանակ կացին



3992-87

մոտավորապես 14,000 պոռնիկներ, վորոնք և տարածում ելին սիֆիլիսը ժողովրդի և զինվորների մեջ:

16-րդ դարում, ծովագնացության զարգացման հետևանքով սիֆիլիսը մեծ տարածում ստացավ ծովափնյա քաղաքներում:

Սիֆիլիսի առաջին եպիդեմիան տեղի յեռնեցել 1570 թվին Շվեյցարիայում, յերկրորդը՝ Շոտլանդիայում 17—18-րդ դարերում և շատ յերկար ե տեղել, վորովհետև կենցաղային վորոշ սովորություններ ոժանդակել են սիֆիլիսի տարածմանը, մեծ մասսամբ արտասեռական ձանապարհով, ինչպես որինակ՝ ընդհանուր ամանից ուստեղ, միասին միԱնույն անկողնում քնելը, և այլն:

Յերրորդ եպիդեմիան տեղի ե ունեցել 1757 թ. Դանիայում և տեղել ե մինչև 1813 թ., վորի ժամանակ կառավարության հրամանագրով, առանց բժշկական քննության արգելվում եր ամուսնությունը:

Սիֆիլիսը խիստ տարածված ե յեղել 1789 թ. Բալկանյան յերկրներում, վորտեղ իշխանության հրահանգով 11-ոկրուգում անցկաց-

րած բժշկական քննությունը հայտաբերել է 19,000 սիֆիլիսով հիվանդ, վորոնց համար կազմակերպվում են հատուկ բուժ. հիմնարկներ և 4 տարվա ընթացքում հաջողվում ե իշեցնել հիվանդների թիվը:

Սիֆիլիսը Ռուսաստանում հայտնի է դարձել 15-րդ դարից «ֆրանսիական հիվանդություն» անունով, (այսինքն Ֆրանսիայից բերված): 1878—1880 թվականներին Ռուսաստանում սիֆիլիսով տառապում ելին 2,000,000-ից ավելի մարդ:

Բժ. Զիստյակովը 1880 թվին քննության յենթարկելով Պինչևսկի գավառի բնակչությունը, գտել ե, վոր նրա 4,73 տոկոսը հիվանդ ե սիֆիլիսով: 1893 թ. բժիշկ Զանդբերգը հայտնաբերել ե, վոր իր ամբողջատոր հիվանդների 20,6 տոկոսը սիֆիլիսով հիվանդներ են:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ցարական Ռուսաստանում սիֆիլիսը լայն շափերի յեր հասել, մինչդեռ բուժիչ հիմնարկները և միջոցները այնքան սահմանափակ ելին, վոր աշխատավոր լայն մասսաները հնարավո-

բություն շոմեյին բուժվելու, մանավանդ, վոր բուժ-ոպնոթյունը վճարովի երև և վոշ մատչելի բոլորի համար: Բացի դրանից, այն ժամանակ ստեղծված հասարակական կարծիքի հետևանքով, վոր սիֆիլիսով հիվանդն արհամարհվում եր հասարակության կողմից, առիթ եր տալիս թագնելու հիվանդությունը, վորի պատճառով և անխափան կերպով տարածում եր սիֆիլիսը:


Մեզ մոտ, խորհրդային յերկրում, ինչպես ուրիշ վարակիչ հիվանդություններ, այնպես ել սիֆիլիսը պակասել և պակասում է որեցոր, շնորհիվ այն բոլոր միջոցառումների, վորոնք ձեռնարկվել են խորհրդային առողջապահական որգանների կողմից, և մասնավորապես վեներական հիվանդություններից փրկելու համար:

ՍԻՖԻԼԻՍԻ ՀԱՐՈՒՑԻՉԸ ԿԱՄ ԴԺԳՈՒՅՆ ՍՊԻՐՈԽԵՏ

Սիֆիլիսը վարակիչ հիվանդություն եւ մյուս վարակիչ հիվանդությունների նման նաև ունի իր հարուցիչը:

Սիֆիլիսի հարուցիչը, արտաքուստ շատ

նման եւ պտուտակի, սակայն ուրիշ պտուտակաձև մանրեներից տարբերվում է իր բարակությամբ և դժգունությամբ, այդ պատճառով միկրոսկոպի սովորական լուսավորումով հնարավոր չեն նրան հայտաբերել:



Նկ. № 1. Սիֆիլիսի հարուցիչը – սպիրոխետը

Սիֆիլիսի հարուցիչը կամ սպիրոխետը
Հայտնագործվել է 1905 թ. պրոֆ. Շառուդինի
կողմից, այդ պատճառով ել կոչվում է
Շառուդինի դժգույն սպիրոխետ։ Դժգույն սպի-
րոխետը անմիջապես վոշնչանում է շեր-
մությունից և ախտահանիչ նյութերից, ինչ-
պես նաև չոր պայմաններում, մինչդեռ խո-
նավ պայմաններում կարող է յերկար ապ-
քել։

Դժգույն սպիրոխետը մաշկի կամ լորձա-
թաղանթի, նույնիսկ աննշմարելի քերծվացք-
ներից, մտնելով մարդու որբանիզմի մեջ,
առաջ է բերում սիֆիլիս հիվանդությունը։

ԻՆՉՊԵՍ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՍԻՖԻԼԻՍԻ ՎԱՐԱԿՈՒՄԸ

Սիֆիլիս հիվանդության վարակումը կա-
րող է տեղի ունենալ յերկու ճանապարհով՝
սեռական և արտասեռական։ Վարակումը
սեռական ճանապարհով է կոչվում այն
դեպքում, յերբ անհատը սիֆիլիսով հիվան-
դանում է սեռական հարաբերության միջո-
ցով, իսկ վարակումը կարող է տեղի ունե-

նալ, յերբ կողմերից մեկը (կինը կամ տղա-
մարդը) հիվանդ է սիֆիլիսով։ Արտասեռա-
կան է կոչվում այն դեպքում, յերբ անհատը
հիվանդանում է համբուլրի, ծխախոտի մնա-
ցորդի, գդալի կամ բաժակի միջոցով, որի-
նակ, յեթե ընտանիքի անդամներից մեկը
հիվանդ է սիֆիլիսով, նա կարող է վարա-
կել ընտանիքի մյուս անդամներին բաժակի,
գդալի, որբիչի, անկողնու և այլ միջոցներով։

Արտասեռական վարակում հաճախ կարող
է լինել և այն դեպքերում, յերբ սիֆիլիսով
հիվանդ կինը կերակրում է առողջ յերեխա-
յի, կամ հակառակը, յերբ առողջ կինը կե-
րակրում է հիվանդ յերեխայի։

Սիֆիլիսի վարակումը թե սեռական և թե
արտասեռական ճանապարհով, տեղի է ու-
նենում միայն այն դեպքում, յերբ մաշկը
կամ լորձաթաղանթը իր վրա ունի քերծվածք։
առողջ և ամբողջականությունը շխախտված
մաշկից ու լորձաթաղանթից սպիրոխետը
թափանցել չի կարողանում, հետևաբար և
վարակում տեղի ունենալ չի կարող։

ՍԻՖԻԼԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ ԿԱՄ ԿՈՇՏ
ՇԱԽԿԻ

Սիֆիլիսով վարակված մարդն իր հիվանդության մասին կարող եւ իմանալ վարակվելուց 2—3 շաբաթ հետո: Վարակումից մինչև հիվանդության առաջին նշանների հայտնվելու շրջանը (ինկուբացիոն շրջան), վորի տեսողությունը կախված է վարակման ժամանակ անցած սպիրոխետների քանակից (վորքան շատ սպիրոխետ և անցնում, այնքան կարճ եւ ինկուբացիոն շրջանը և հակառակը), հիվանդը վոշինչ չի զգում, բացառությամբ այն յերեխույթի, վոր վարակման տեղի ամենամոտ գեղձերը սպիրոխետների արտադրած թույնի գրգռման աղդեցության շնորհիվ, սկսում են բորբոքվել և ուռչել: Ուստած գեղձերը չեն ցալում և չեն անհանգստացնում հիվանդին: Սակայն ինկուբացիոն շրջանից հետո վարակման տեղում առաջ ե գալիս հում մսի գույն ունեցող փայլում հարթ յերեսով վերը, վորը չ մատով թեթև սեղմելիս կոշտություն է զգացվում,

այդ պատճառով ել կոշվում ե կոշտ շանկր: Եկ. № 2, № 3:



Եկ. № 2. Սիֆիլիսը առաջին շրջանը—կոշտ շանկր վարակված արտասեռական ճանապարհով:

Կոշտ շանկրը չի ցավում, քոր չի գալիս և վոշ մի անհանգստություն չի պատճառում հիվանդին, վորի պատճառով ել հիվանդը ուշադրություն չի դարձնում նրա վրա, մինչ-



Նկ. № 3. Արքիլիսի առաջին շրջանը—կոշտ շանկր:
Վարակված սեռական ձանապարհով:

Դեռ կոշտ շանկրն իր արտադրուկի մեջ
ունի մեծ քանակությամբ սպիրոխետ, վորը
կարող է հեշտությամբ վարակել թե սեռա-

կան և թե արտասեռական ձանապարհով,
նայած թե վորտեղ ե գտնվում կոշտ շան-
կըրը:

Կոշտ շանկրն անցնում է նույնիսկ ա-
ռանց բուժման, բայց դա չի նշանակում,
թե սիֆիլիսը ևս բուժվեց:

Սիֆիլիսից խուսափելու համար, յուզա-
քանչյուր անհատ, կասկածելի սեռական
հարաբերությունից հետո, յեթե նրա անդա-
մի վրա վորոն վերք ե առաջ յեկել, վերքի
բնույթը վորոշելու համար պետք է բժշկի
դիմի, վորովհետև սիֆիլիսի վաղաժամ դի-
ագնոզումը (ախտորոշումը) ապահովում
է սիֆիլիսի բուժման արագությունը և հա-
ջող ընթացքը:

**ՍԻՖԻԼԻՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ ԿԱՄ ԸՆԴՀԱ-
ՆՈՒԹ ՎԱՐԱԿՄԱՆ ՇՐՋԱՆ**


Սիֆիլիսի առաջին շրջանում սպիրոխետ-
ների քանակությունը այրան մեջ քիչ ե լի-
նում, վորի պատճառով և հիվանդի մոտ

ընդհանուր յերեվույթներ չեն նկատվում,
մինչդեռ վարակումից 1—8 շաբաթ անց,
սպիրոխետների քանակությունն արյան մեջ
չափազանց շատանում է և առաջ են գալիս
ընդհանուր յերեվույթներ:

Հիվանդն զգում է ընդհանուր թուզություն,
ցավ հոդերում, վոսկորներում, ախորժակի
կորուստ. այս յերեվույթները կարծատեվ են
և անցնում են առանց բուժման: Դրանից
հետո առաջ են գալիս սիֆիլիսի յերկրորդ
շրջանին հատուկ նշանները՝

ՅԱՆ, վորը մեծ մասամբ լինում է վորո-
վայնի, մեջքի և կողքերի վրա, ինչպես և
ամբողջ մաշկը կարող է պատված լինի ցա-
նով: Սիֆիլիտիկ ցանը, ի տարբերություն
մյուս ցաների, չի թեփուտվում, սեղմելիս
անհետանում է և սուբյեկտիվ հիվանդը վո-
շինչ չի զգում:

Յերկրորդ շրջանին հատուկ են պապուլա-
ները, վորոնք լինում են հետույքի, սեռա-
կան որգանների և շերի շրջանում: Նկ. 4:



Նկ. № 4. Սիֆիլիսի յերկրորդ շրջանը
—պապուլանե սիֆիլիս:
ԲՇՏԻԿՆԵՐ, վորոնք տարածված են ամ-
բողջ մարմնի, ինչպես և բերանի լորձաթա-

ղանթի, լեզվի և քիմքի վրա: Բշտիկներն այստեղից լինում են կապտամոխրագույն և մեծ արագությամբ վեր են ածվում վերքերի, վերքերը ցավոտ չեն, բայց շափազանց վարակիչ են:

Սիֆիլիսի յերկրորդ շրջանն ամենավարակիչ շրջանն է. այս դեպքում հիվանդը կարող է վարակը տարածել և սեռական և՝ արտասեռական ճանապարհով: Նախկինում սիֆիլիսի արտասեռական ճանապարհով վարակումը, մանավանդ սիֆիլիսի յերկրորդ շրջանում, շատ մեծ շափերի եր հասնում. դա բոլորում եր ժամանակի կենցաղային և կրոնական ծիսակատարություններից, որինակ՝ նկարագրած են դեպքեր, յերբ ուխտագնացության և յեկեղեցիներում հաղորդման ժամանակ սիֆիլիտիկները համբուրել են «սուրբ խաչը» և նրանից հետո համբուրել ու վարակվել են բաղմաթիվ ուխտավորներ: Սիֆիլիսի յերկրորդ շրջանում, հիվանդը կարող է վարակել իր շրջապատողներին, համբուրի, գդալի, բաժակի, սրբիչի, ամանների, անկողնու և այլ միջոցներով:

Սիֆիլիսի յերկրորդ շրջանի յերեվույթները կարող են անցնել և առանց բուժիչ միջոցների:

Սիֆիլիսի ՅԵՐՐՈՐԴ ԿԱՄ ԳՈՒՄՄԱՅԻ ՇՐՋԱՆ ՅԵՄԵ սիֆիլիսի առաջին և յերկրորդ շրջաններում, հիվանդն իրեն անհանգուտացնող վլոշինչ չի զգում և յեղած յերեվույթներն ել անցնում են առանց բուժվելու, ապա յերրորդ շրջանում, դրանց հակառակ, առաջացած յերեվույթները շատ ծանր են հիվանդի համար և յերբեք չեն անցնում առանց բուժման: ՅԵՐՐՈՐԴ շրջանում հիվանդի մարմնի զանազան մասերում առաջ են գալիս խոշոր վերքեր, քայլայում են հյուավածքները, այդ վերքերը կոշվում են գումմաներ: նկ. № 5

Գումմաները սովորաբար առաջ են գալիս վարակվելուց 2, 3, 4 տարի անց. Հազվագյուտ դեպքերում առաջանում են նաև հիվանդության առաջին տարվա վերջում, վերջապես նկարագրած են դեպքեր, յերբ գումման առաջացել և հիվանդանալու առաջին որվանից 40—50, նույնիսկ 67 տարի անց:

Գումմաները կարող են լինել բերանի խո-



Նկ. № 5. Սիֆիլիսի յերրորդ շրջանը - դեմքի
սիֆիլիսային գումարամամամ
ոռոշում, քիմքում, քթի միջնորմում, թոքերում
և այլն: Գումարայի քայրայիշ ազդեցության

հետևանքով հիվանդը կարող է կորցնել իր
քիթը, քիմքը, վորոնց տեղը գոյանում են
սարսափելի և այլանդակ սպիներ: Հիվանդի
մոտ կարող է առաջ գալ սիրտանոթային
սիստեմի ծանր հիվանդություն, արյունահո-
սություն ներքին որգաններում (լյարդում,
ուղեղում, թոքերում) այս դեպքերում պարզ
է, վոր, գործը վերջանում է մահով:

Սիֆիլիսի յերրորդ շրջանն առաջ է գալիս
այն դեպքերում, յերբ հիվանդը բոլորովին
չի բուժվել կամ շատ անկանոն է բուժվել,
մինչդեռ սիֆիլիսի առաջին կամ յերկրորդ
շրջանում կանոնավոր բուժվող հիվանդը յեր-
բեք առիթ չի ունենում տառապելու սիֆի-
լիսի յերրորդ շրջանով, վորն իր բնույթով
շատ ավելի վտանգավոր է հիվանդի համար,
քան նախորդ շրջանները:

Պարզ է, վոր յերրորդ շրջանում, հիվանդը
ստիպված է զիմել բժշկի, վորովհետև նրան
անհանգստացնում է գումաման, մանավանդ,
յեթե նա առաջցել է դեմքի վրա, կամ
մարմնի տեսանելի վորևե մասում:

Սիֆիլիսը կարելի է բուժել նաև յերրորդ

շրջանում, յեթէ հիվանդը ճշտությամբ կատարում է բժշկի խորհուրդները և բուժման լրիվ կուրսը ստանալու համար ճշտապահութեն հաճախում բժշկի մոտ:

ՍԻՖԻԼԻՍԻ ԶՈՐՈՐԴ ՇՐՋԱՆ ԿԱՄ ՆՅԱՐԴԱՅ- ՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՍԻՖԻԼԻՍ

Քբուժվելու, կամ անկանոն բուժվելու դեպքում, սիֆիլիսով հիվանդի մոտ, վարակվելոց 10—15 տարի անց (նկարագրված են դեպքեր 20—25 տարի անց) առաջ են գալի նյարդային համակարգության խանգարումներ: Այդ խանգարումներն առաջանում են նրանցից, վոր սպիրոխետներն արյան միջից թափանցելով մեծ մասամբ վողնուղեղի հեղուկի մեջ, իրենց քայլքայիշ ազդեցությունն են թողնում ուղեղային հյուսվածքի վրա:


Այս շրջանում հիվանդը ցավեր ե զգում վերին և ստորին վերջավորություններում, բթանում ե շոշափելիքը, խանգարվում հիվանդի քայլվածքը, միազգասեռական որդանների ֆունկցիաները, հիվանդը չի կարողանում մեզը պահել: Հաճախ ձևափոխվում են հոդերը, վերջավորությունները (վոտները,

ձեռքերը), սկսում են հետ աճել: Հիվանդը կորցնում է իր հիշողությունը, ազատ խոսելու և կու տալու ընդունակությունը, փաստորեն դառնում է անդամալուծ: Բացի դրանից, հիվանդն ստանում է նյարդային հիվանդություններ, վորոնք յերեմն վերջանում են խելագարությամբ: Նյարդային համակարգության սիֆիլիսը միշտ ել հնարավոր չե բուժել, ուրեմն հիվանդն աշքաթող չպետք ե անի հիվանդությունը և հասնի շորրորդ շրջանին:

ԲՆԱԾԻՆ (ԺԱՌԱՆԳԱԿԱՆ) ՍԻՖԻԼԻՍ

Սիֆիլիսով հիվանդ կինն առողջ սերունդ ունենալու ընդունակ չե: Պաղի սնուցման վրա սպիրոխետների ունեցած վնասակար ազդեցության շնորհիվ սիֆիլիսով հիվանդ հղի կինը հաճախ վիժում է հղիության 3—4 ամսում: Բացի դրանից, հիվանդ կինը կարող ե կենդանի յերեխա ծնել, վորի վրա յերեսում են սիֆիլիսի բնորոշ նշանները, յերեխան լինում ե թույլ, վատ ե ընդունում մոր կուրծքը, ունենում ե նյարդային հա-

մակարգության խանգարումներ և մարմնի
վրա ու վոտքերի տակը բշտիկներ։ Նկ. № 6։



Նկ. 6. Բնածին սիֆիլիսը մանկան վրա։

Ժառանգական սիֆիլիսի նշանները կարող
են արտահայտվել և ավելի ուշ՝ ժառանգա-
կան սիֆիլիս ունեցող յերեխան ունենում ե-
տեսողության և լսողության խանգարում։
Ժառանգական սիֆիլիսը լրիվ անցնում է,
յեթե ժամանակին և լավ ե կազմակերպվում
բուժման գործը։

Այսպիսի դեպքերում, անհրաժեշտ է ձեռ-
նարկել նաև մոր բուժմանը։ Յեթե բնածին
սիֆիլիսով հիվանդ յերեխան չի բուժվում,
ապա նա զարգանում է շափաղանց դանդաղ,
ընդունակությունները՝ սահմանափակ, յեր-
բեմն այդպիսի յերեխաները նույնիսկ ա-
պուշ են լինում։ Վերջապես յերեխայի մոտ
կարող են առաջ գալ նյարդային համա-
կարգության խանգարումներ և խելագարու-
թյուն։

Հստ վիճակագրական տվյալների, ցարա-
կան Ռուսաստանում բնածին սիֆիլիսից
մահացել են տասնյակ հազարավոր յերե-
խաներ։

ԱՐՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԿԱՄ ՎԱՍՍԵՐՄԱՆԻ
ՈԵՍԿՑԻԱՆ

Սիֆիլիսի ախտորոշումը շատ հեշտ է,
յերբ հիվանդը բժշկի և դիմում կոշտ շան-
կրի շրջանում, վորովհետև շանկրից հոսող
անգույն հեղուկն իր մեջ մեծ քանակու-
թյամբ սպիրոինետներ և պարունակում, վո-
րոնց հեշտությամբ կարելի է հայտաբերել
միկրոսկոպիկ հետազոտությամբ։ Սակայն
սիֆիլիսի յերկրորդ և ավելի ուշ շրջաննե-
րում, այդ ձեռվ ախտորոշելը հնարավոր չեւ

Այդպիսի դեպքերում բժիշկը դիմում և
արյան հետազոտմանը Վասսերմանի յեղա-
նակով, վորով հնարավոր և դառնում պար-
զել, հիվանդ և արդյոք տվյալ անհատը սի-
ֆիլիսով, թե՞ վոշ։

Վասսերմանի ռեակցիային բժիշկը կարող
է դիմել հետևյալ դեպքերում։

1. Սիֆիլիսի կասկածելի դիագնոզը ձշտե-
լու համար։

2. Յերբ կինը անհայտ պատճառներով,

հաճախակի վիժուալներ և ունենում, կամ
մեռած յերեխաներ ծնում։

3. Սծմայր վարձելու դեպքում, ծծմոր ա-
ռողջությունը վորոշելու համար։

4. Հիվանդության ընթացքում բուժման
արդյունքները պարզելու համար։

ՍԻՖԻԼԻՍԸ ԲՈՒԺԵԼԻ ՅԵ

Սիֆիլիսը պատկանում է այն սակավա-
թիվ հիվանդությունների շարքին, վորոնք
ունեն իրենց դեղանյութային սպեցիֆիկ
բուժիչ միջոցները, այսինք միջոցներ վո-
րոնք ազդում են հիվանդությունն առաջաց-
նող միկրո-որգանիզմների վրա և վոշնչաց-
նում նրանց։

Մարդու որգանիզմում, արյան մեջ յեղած
սպիրոինետը վոշնչացնելու համար բազմա-
թիվ դեղանյութային միջոցներ կան, վորոնք
և ոգտագործվում են սիֆիլիսը բուժելու
համար։ Նշանակում է ՍիֆիլիՍԸ ԲՈՒԺԵԼԻ
ՅԵ, վոշ ինքնուրույն, առանց բուժիչ միջոց-
ների այլ յերկարատև, համառ և համբեր-
տար բուժումից նետո։

Սիֆիլիսի բուժումը տարվում է կուրսերով, այսինք հիվանդը մեկ ու կս ամիս շաբումակ դեղանյութեր ե ստանում: Հետո հանգստանում է մեկից մինչև յերեք ամիս, հետո նույն ձևով կուրսն սկսվում է ու շարունակվում մինչև հիվանդության ըրիվ բուժումը:

Յուրաքանչյուր հիվանդ լավ պետք է գիտենա, վոր ինչքան շուտ ե դիմում բժշկի, այնքան կարծ է տեղում բժշկությունը և հակառակը:

Այն դեպքում, յերբ հիվանդը բժշկին դիմում է սիֆիլիսի առաջին շրջանում և լրիվ կատարում է բժշկի խորհուրդները, ապա դրանով նա ապահովում է հիվանդության շափազանց արագ բուժումը, վորը և կոչվում է աբորտատիվ բուժում:

ՍԻՖԻԼԻՍԸ ՅԵՎ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիֆիլիսով հիվանդացած և լրիվ առողջացած անհատը կարող է ամուսնանալ և ունենալ միանգամայն առողջ սերունդ, քանի

վոր ներկայումս գործածվող բուժիչ միջոցները միանգամայն ապահովում են սիֆիլիսի լրիվ բուժումը:

Սիֆիլիսի լրիվ բուժման մասին հիվանդը պետք է համոզվի բժշկի սպառիչ հետազոտումից և պատասխանից հետո, այլապես շտապողականությունն այս դեպքում կարող է լնասել: Ամուսնանալ կարելի է այն դեպքում, յեթե բժիշկը թույլատրում է այդ իսկ բժիշկն այդ կարող է թույլատրել միայն և միմիայն հիվանդի լրիվ բուժման դեպքում:

Լրիվ շրուժված հիվանդը ամուսնալու դեպքում նախ վտանգում է իր բուժման գործը, ապա կարող է վարակել իր ամուսնուն և վերջապես ունենալ անառողջ և անկենունակ սերունդ: Նշանակում է լրիվ շրուժված հիվանդն ամուսնալու իրավունք չունի:

ՊԱՅՔԱՐ ՍԻՖԻԼԻՍԻ ԴԵՄ

Վեներական հիվանդությունները, այդ թղթում նաև սիֆիլիսը մենք ժառանգություն

Ենք ստացել յարական Ռուսաստանից, վորա-
մեղ սովի և գործազրկության պատճառով
տարածված եր պոռնկությունը և նրա ան-
քաժան ու զուգակից հանդիսացող վեներա-
կան հիվանդությունները:

Խորհրդային յերկրում ստեղծված են վա-
րակից խուսափելու և վարակման դեպքում
լրիվ բուժվելու բոլոր հնարավորությունները:

Պոռնկությունն ու պոռնկատները վաղուց
անցել են պատմության գիրկը, մինչդեռ
նրանք կապիտալիստական յերկրներում ա-
րագ կերպով աճում են, վորպես կապիտա-
լիզմի անդավաճան ուղեկիցներ:

Հակառակ բուժուական տեսաբանների
այն տեսությանը, թե «պոռնկությունը բիո-
լոգիական յերեսութ ե» մարքսիզմն ապա-
ցուցեց, վոր պոռնկությունը տնտեսական
յերեսութ ե, վոր կինը դիմում է պոռնկու-
թյան միայն և միմիայն կարիքից դրդված,
վորպեսզի իր մարմնի վաճառքի գնով պահ-
պանի իր և իր ընտանիքի գոյությունը:

Այսոր խորհրդային կինը, տղամարդուն

համահավասար մասնակցում է սոց-շինա-
րարության մեծ գործին. նա նվաճում է գի-
տության բարձրունքները, նա այն է, վորը
շեր կարող և չի կարող լինել կապիտալիս-
տական իրավակարգում, վորտեղ կինը յե-
րազել անգամ չի կարող խորհրդային կնոջ
ներկան:

Խորհրդային յերկրում բժշկությունը ձրի
ե, դա նշանակում է, վոր յուրաքանչյուր
քաղաքացի անհրաժեշտության դեպքում կա-
րող ե ձրի բժշկական ոգնություն ստանալ:
Մինչդեռ կապիտալիստական յերկրներում
հիվանդն իր առողջությունը վերականգնելու
համար մեծ գումարներ ե ծախսում, իսկ
բնակչության ճնշող մեծամասնությունը
զուրկ լինելով այդ միջոցներից մնում է ա-
ռանց բուժման:

Մեզ մոտ վեներական հիվանդությունների
դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով,
ստեղծված ե դիսպանսերային լայն ցանց,
վորով հնարավոր ե դառնում կանխել սիֆի-
սով վարակումը ընտանիքում, լայն բացա-

տրական աշխատանք տանելով Հիվանդի
նրա ընտանիքի անդամների մեջ սիֆիլիսի
վարակման հետևանքների, վտանգի և բուժ-
ման մասին։ Այս միջոցների շնորհիվ մինի-
մումի են հասել սիֆիլիսի վարակման թարմ
դեպքերը։


Այն քաղաքացիները, վորոնք Հիվանդ են
սիֆիլիսով և չեն բուժվում ու դրանով վա-
րակի ազբյուր հանդիսանում շատ շատերի
համար, այդպիսիների նկատմամբ խորհրդ-
դային որենսդրությունը նախատեսում է
հատուկ պատիժ (6 ամսից մինչև յերեք
տարի ազատազրկում), սակայն յերբեք
խորհրդային գիտակից քաղաքացին առիթ
չպետք է տա իր նկատմամբ գործադրելու
պատճիշ միջոցը։ Անհրաժեշտ է գիտակցել,
վոր շբուժվելու դեպքում Հիվանդը վտան-
գում է իրեն և շրջապատողների ու հարա-
դատների առողջությունը, վորն ամենաթան-
գըն է յուրաքանչյուրի համար։

Պատ. Խմբագիր՝ Պրոֆ. Ն. Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Սրբագրիչ՝ Հ. ՄԱՅԻՑՅԱՆ

Գլամիլսի լ. Բ—1084, Պ. 93, Տ. 3000

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից «Խորհրդային
Հայտատան» իրատարակչության տպարան, Յերևան





14017

Н Арм.
1-567а

Л

Д-р Р. А. АГАСАРЯН

КРАТКИЕ СВЕДЕНИЯ о СИФИЛИСЕ

Отдел Сан. Просвещения НК Здравоохранения Арм. ССР
ЕРЕВАН

1940

ՀՀ Ազգային գրադարան



NL0273732

6593

T1-567a